

« ւել նման է իգի իւրոյ ձեւով, և գեղով
 « քան զարուան այլ թոչնոց. որոյ ո՛չ
 « միայն չընաղ է զոյն, և կամարածեւ
 « ձեռ, այլեւ կատարքն կարմիր և թա-
 « զածեւ, և ձայնն բարձր և ազդու, որով
 « երգէ յորոշեալ պահա ինչ աւուրն և
 « զիշերի, ազդ առնելով մարդկան զժա-
 « մանակս Սա ունի ճարպ իբրեւ զհաւ,
 « յորմէ կազմեն զեղ ընդդէմ ուռուցից,
 « կարծրութեան ջլաց և ցաւոց ոսկերաց՝

« օծելով: Բայց միսն ո՛չ հասանէ ի չափ
 « ազնուութեան մտոյ հաւու: Սիրական
 « անդամ նորա չորացուցեալ և փոշիա-
 « ցուցեալ, ի վար արկաննն իբր զեղ
 « նուազութեան սաղմի: Ի լեզւոյ նորա
 « յոնչպէս յօրինեն զեղ ազգու ի զիպուածս
 « ցաւոց աչաց և բծից հրեասաց »:

(Շարունակելի)

ՏՕԹԹ. ՎԱՆԻ. Ե. ԹՈՂՈՒՄՅԱՆ

Հ Ա Յ — Գ Ո Մ Ի Ն Ի Կ Ե Ս Ն Մ Ս Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ա Կ Ա Ն
 Մ Ա Ն Յ Թ Ա Գ Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(Շարունակութիւն տես Բազմ. 1922 Յունուար. էջ 229)

Քարոզող եւ Միաբանող եղբարց հու-
կառակորդները

Քարոզող եղբարք և անոնց յարած
 Հայերը, նորադարձերու յատուկ անխոհեմ
 եռանդով, կ'ուզէին սերտիւ միացնել հայ
 ազգը Արևմտեան եկեղեցւոյ ո՛չ միայն հա-
 ւատքով՝ այլ նաև եկեղեցական կարգապա-
 հութեամբ և ծէսով: Ասով Հայոց վերա-
 գրուած մոլորութիւններու ցանկին մէջ՝ զոր
 կալանոսս առած է Յովհ. Քոնեցիէն՝ Մխի-
 թարեանը և անոնցմէ վերջ Դուռնըպիզ
 դիտել կու տան, որ ինչ ինչ բաներ հաւատոյ
 ինդիր չեն, այլ միայն կարգապահական
 տարբերութիւններ, որ ամենահին սովորու-
 թեամբ օժտուած՝ ազատ, մանաւանդ թէ
 օգտակար կերպով կարելի էր պահուիլ.
 Ինչպէս է աշխարհականներն ալ երկու
 տեսակով հաղորդելը և արևմտեայց ցով
 չեղող սօսները: Հայ ժողովուրդն ու կղերը
 չէին հանդուրժեր այս նորութիւններուն՝
 որոնք մէկէ աւելի անգամներ արգելք
 եղան միութիւնն ընդգրկելու:

Միւս կողմանէ ալ անարդար է յան-
 ցանքը բոլորովին Միաբանող կամ անոնց
 ուսուցիչներուն Քարոզող եղբարց վրայ

ձգել. վասն զի Յովհ. Ի. Բ. պապը իր 12
 նոյ. 1321⁶ մէկ թուղթին մէջ ծիսական
 միաձեւութիւնն ալ կը պատուիրէր այս
 խօսքերով. «Կը ինդրենք որ... յիշեալ հոռ-
 « մէական եկեղեցւոյ ծէսին ընդունած տօ-
 « ները, զոր ձեզ պիտի յանձնեն թղթիս ներ-
 « կայացնողները՝ մեր սիրելի որդիք եզ. Յա-
 « կոբ և Պետրոս, կրտսեր Եղբարց կարգէն և
 « հմուտ աստուածային օրինաց, ամենայն
 « անձնանուիրութեամբ ջանաց պահել »:
 Հայոց պատմագիրներէն և մեզ հասած
 եկեղեցական գրքերէն յայտնի է՝ որ Միաբ.
 Եղբարք լիովին հնազանդեցան այս քահա-
 նայապետական հրամանին: Լատին ծէսը
 — բաց ի լեզուէն — պահուեցաւ մինչև
 կայանոսէ (1650) վերջն ալ, ո՛չ միայն
 իրենցմէ՝ այլ նաև եկեղեցիներէն, որոնց
 եպիսկոպոսը իրենցմէ կ'ընտրուէր, մասնա-
 ւանդ Նախիջևանի մէջ: Լատին ծէսի ա-
 մենաբուռն պաշտպանն եղաւ Ներսէս Պա-
 լենց՝ որ անդու հալածեց հակառակորդ-
 ները:

1. — Տաճուակցիք

Հայերէն շատեր կառչած էին իրենց ա-
 ւանդական սխալներուն, մանաւանդ Քրիս-

տոսարանութեան և խորհրդոց վարդապետութեան նկատմամբ, որով այս վարդապետութեանց շուրջը կը դառնար ուղղափառաց զլիաւոր կեդրոնին՝ Գոնեցոց բողոք գրական գործունէութիւնը: Միուեթեան հակառակողներու Ռոյնը Տաթևու վանքն էր, ուր բանին և գրով անդադար մարտ կը մղէին ուղղափառ աստուածաբանութեան դէմ: Գլխաւորներն էին Յովհ. Որոտնեցի + 1388, և յետոյ Գր. Տաթևացի + 1410: (որոնց արդէն իսկ ծանօթ գրութիւններուն վրայ կը շարունակէ խօսիլ հեղինակը):

2. — Մարքինք

Քոնսյայի վանքին նման և անկէ քիչ մ'ալ առաջ միարանութիւն մը հիմնեցին կրտսեր եղբարք՝ Մարու քաղաքին քով՝ Ս. Թաղէսի վանքին մէջ, որուն առաջնորդը, Ջաքարիա եպօ. Կործորեցի՝ շահած էին ի միութիւն հաւատոյ, որ և անդու կը վաստակէր նոյն հաւատքը տարածելու: Ասոնք ևլ Քոնեցոյն նման զբզեցին աշակերտաց գրական գործունէութիւնը, և շատ մը օգտակար գրքեր թարգմանեցին: Յիշեցինք արդէն Եր. Բարթողիմէոսի աշակերտութեամբ Կործորոյ վանքին՝ Ածրնկն. Բովանդակութեան Գ. մասին թարգմանութիւնը: Մարուի և Քոնսյայի վանքին յարաբերութիւնները միշտ թշնամի ոգով չեղան:

Քոնեցոյն առաջին ընկերներուն ժամանակ՝ Թաղէսի վանքին առաջնորդն էր Գուլիէլմոս Սորաղի՝ կրտսեր Եղբարց կարգէն, որուն համար Ընդհանրական Առաջնորդաց ԻՊ. ժամանակագրութիւնը հետեւեալ գովեստը կ'ընէ. « Բարեպաշտ և շատ « զբազէտ անձ, որ կատարելապէս ծանօթ « անոնց (Հայոց) լեզուին՝ քարոզելով, « միտեցնելով և ինչ ինչ գրքեր լատիներէն « հայերէն թարգմանելով՝ հոգեկան մեծ « օգուտներ բրաւ հոն »: Նոյն վանքին մէջ մեկնեց Ս. Գիրքը թէ կրտսեր Եղբարց և թէ հայ աշակերտներու՝ բազմաթիւ ունկնդիրներ ունենալով:

Բայց Գոմինիկեան ու Փրանկիսկեան այս երկու դպրոցներուն և իրենց աշակերտներուն մէջ պակաս չեղան աստուածարանական վէճերը. օրինակի համար աղքատութեան և Գահանայապետին անսխալութեան վրայ, որուն առիթ տուած էր Յովհ. ԻԲ.՝ առած մէկ որոշողութիւնը՝ Գրիստոսի և Փրանկիսկեանց աղքատութեան վրայ՝ հակառակ կրտսեր Եղբարց Ընդհ. ժողովի կամքին: Շատ Փրանկիսկեաններ ազգու կերպով կուռելու համար՝ որպէս զի վճիռը ետ առնել տան՝ պապը շատ գէշ կերպով սխալեցաւ կը կանչէին: Անսխալականութեան վարդապետութիւնը դեռ նոյն ատեն յայտնապէս սահմանուած չըլլալով՝ չէին ընդուներ զայն Ս. Թաղէսի և Գավրէթի վանքին կրտսեր Եղբարք, այնպէս որ երզուընցած վկայութիւններու համեմատ՝ անոնցմէ ոմանք նոյն իսկ հերետիկոս համարած են Յովհ. ԻԲ. և թովմաս Ազուկնացին՝ զոր ինքը սուրբ հռչակեց: Մինչ Գարգող Եղբարց աշակերտները կը պաշտպանէին պապին անսխալականութիւնը.....

Գուլիէլմոս Սորաղի, ի միջի այլոց, աւանդեց նաև Մատթէի աւետարանին և Յայտնութեան մեկնութիւնները՝ Յովհ. Պետրոս Օլիվիի հետեւողութեամբ: Այն ատենները Յայտնութեան մեկնութիւնը վէճի նիւթ դարձած էր շարունակ Փրանկիսկեանց, մանաւանդ եղ. Գէորգ Արտիացոյն քով, որ անոր մէջ յիշուած նշանաւոր կենդանին՝ մարգարութիւն կը համարէր Յովհ. ԻԲ.՝ զոր « ամենալատ սարկաւազ » կը կոչէր. (Ճամակ 20) յուլ. 1333): Ջարմանք չէ ուրիշն եթէ Քոնեցոց աշխատութեանց մէջ ալ կը ներկայանայ Յայտնութեան մեկնութիւնը, որովհետև պէտք էին պաշտպանել Յովհ. ԻԲ. իրենց կարգին մեծ բարեկամը, և աւելի ուղիղ մեկնել նոյն գիրքը:

(Շարունակելի) Ամփոփեց Ն. Գ. ՈՍԿՆՍ

